«Ասի . . . . . թէ ի ժամանակս մեծին Կոստանդիանոսի իբրև ի յայտ եկին մարմինք Նոցա, նա ինքն ետ թաղել զնոսա ի վայելուչ տեղւոջ . . . Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր գնացեալ անդ ի Սուկաւէտ լեառն՝ շինեաց եկեղեցիս ի տեղի վկայութեան Սուքիասեանց Քոշիցն և կարգեաց անդէն զդասս կրօնաւորաց։»

Վերի հատուածէն կերևի որ սրբոց մարմիններն վայելուչ տեղ մի թաղուած են, ուր Լուսաւորիչ եկեղեցի շինած և միաբանութիւն հաստատած է։

Արդէն յետոյ պիտի տեսնենք որ Ս. Սուքիասանց նահատակուած վայրն և շուրջն շինութեանց հետքեր չեն նշմարուիր, բաց ի այս Կարմիր վանքից, որ ½ ժամ ի հարաւ արևմուտս կընկնի։